Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 1

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

1 ապրիլի 2015թ. ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանը, մարզի խորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

/Զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան/

2. Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին.

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ս. Դավթյան/

3. ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2014թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2015թ. խնդիրների մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Է. Մարտիրոսյան/

4. ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և ամձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների մասին:

/ Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյան/

5. ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում ՀՀ օրենսդրության մի շարք պահանջների կատարման մասին:

/Զեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ.Կոզմանով/

Օրակարգի առաջին՝ ,, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2014թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

Օրակարգի երկրորդ՝ ,,Մարզի համայնքներում սեփական եկամուտների հավաքագրման ընթացքի և առկա խնդիրների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիակ-տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ս. Դավթյանը:

Օրակարգի երրորդ՝ ,,ՀՀ Սյունիքի մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի, 2014թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2015թ. խնդիրների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Է. Մարտիրոսյանը:

Օրակարգի չորրորդ՝ ,,ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ՀՀ Սյունիքի մարզպետարանում իրականացված տեսչական ստուգումների արդյունքների և արձանագրված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումների մասին,, զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Մ. Կոստանդյանը:

Օրակարգի հինգերորդ՝ ,, ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում ՀՀ օրենսդրության մի շարք պահանջների կատարման մասին,, զեկուցումով հանդես եկավ *ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանովը:*

Օրակարգում ներառված հարցերի շուրջ ելույթներով և հարցադրումներով հանդես եկան Կապան քաղաքային համայնքի ղեկավար Ա. հայրապետյանը, Մեղրի քաղաքային համայնքի ղեկավար Արշավիր Հովհաննիսյանը և Քարահունջի համայնքի ղեկավար Լ. Ավետյանը:

Կցվում են զեկուցումները և ելույթները:

Մարզի խորհրդի նիստում ելույթ ունեցավ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանը:

Մարզի խորհրդի նիստի աշխատանքները ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյանը:

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան
Հեռ. (0285) 2-63-55